

Տարեկան գինը 10 րուբլ կես տարվանը 6 րուբլ:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաբարդացիք զիմում են ուղղակի
Тифлиса. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաօրեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)
Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեղուով:
Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Ազատ Ֆրանսիա և կղերականութիւն:—
Ներքին տեսութիւն: Նամակ Բոստօնից:
Նամակ Վ. Ազուլիայից: Նամակ Խմբագրին:
Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր: Արտա-
քին տեսութիւն: «Մասիս» յօդուածը
Հայ կաթողիկոսների մասին: Մի Բոստօնցիութիւն:
Արտաքին լուրեր: «Մշակ» հեռագիրներ:—
Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

ԱԶԱՏ ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ԿԴՆԵՐԱ- ԿԱՆՈՒԹԻՒՆ

Երեկվայ մեր համարում խօսելով
այն երեւոյթի վրա որ Ֆրանսիա-
կան հանրապետութիւնը իր ներ-
կայացուցիչ ձեռքով պաշտպանում
է արեւելքում կղերականութիւնը,
մենք իրաւունք ունէինք վրդոված
լինելու:

Բայց նոյն իսկ մեր երեկվայ
համարի արտաքին տեսութեան
բաժնի մէջ երկու Ֆրանսիական
ազատամիտ լրագիրների յօդուած-
ները աշտատպելով դեռ չը կա-
րողացանք նրանց մասին մեր
կարծիքը յայտնել մեր առաջնոր-
դող յօդուածում:

Եթէ պարտաւորութիւն ենք
համարում խոստովանել որ Ֆր-
անսիայի աղատամիտ մասը իր
մամուլի բերանով ջանք է անում
ուղղել Ֆրանսիական ներկայա-
ցուցիչ ձեռքով արած սխալը:

Գամբէտտայի օրդան «Repub-
lique Francaise» լրագիրը և
Վալենտին օրդան «Temps»
լրագիրը նուիրեցին ազգու և խե-
լացի առաջնորդող յօդուածներ
արեւելեան քրիստոնեաների, մանա-
ւանդ հայերի ազգային իրաւունք-
ները պաշտպանելու համար, ասե-
լով թէ ազատ Ֆրանսիան չէ կա-
րող Նապօլէօն III-ի քաղաքակա-
նութեանը հետեւել և խառնվել
արեւելեան քրիստոնեաների կրօնա-
կան գործերի մէջ: Ֆրանսիան
պէտք է պաշտպանի ազգային
ինքնիշխան առանց կրօնական խն-
դիրներին դիպչելու և դա այլան-
դակ մի երեւոյթ կը լինէր, եթէ
Ֆրանսիական հանրապետութիւնը
պաշտպանէր արեւելքում կղերա-
կանութիւն, պապականութիւն,
անդրապետականութիւն:

Ազատամիտ երկու լրագիրներ

կարծում են որ Ֆրանսիական
դեսպան Կ. Պօլուս պ. Ֆուրնիէ,
պաշտպանելով հասունին, հետե-
ւել է կամ իր անձնական ճաշա-
կին, կամ Ֆրանսիայի աւանդա-
կան քաղաքականութեանը արե-
ւելքում: Բայց այդ աւանդական
քաղաքականութիւնը, միշտ պաշտ-
պանել կղերականութիւն Ֆրան-
սիայից դուրս, պէտք է փոխվի,
ասում են լրագիրները, պէտք է
տեղ տայ մի այլ աւելի ժամա-
նակակից քաղաքականութեան:

Ֆուրնիէ դեսպանի վրա երկու
լրագիրների կողմից արած յար-
ձակմունքները մեզ կարծել են
տալիս թէ Ֆրանսիական դեսպա-
նը իր արած անզգոյշ քայլից յե-
տոյ կամ չի մնայ իր պաշտօնի
մէջ, կամ ստիպված կը լինի ա-
ւելի խոր կերպով ուսումնասիրել
Ֆրանսիայի այժմեան քաղաքա-
կանութեան ոգին և այսուհետեւ
նրան յարմար փարվել:

Մենք չենք կարող մեր ուրա-
խութիւնը չը յայտնել որ Ֆրան-
սիայում այժմ տիրապետող ազա-
տամիտ մասը վերջապէս հասկա-
ցաւ Ֆրանսիայի իսկական դերը
արեւելքում և յոյս ունենք որ ա-
զատամիտ օրդանների հայեացք-
ները ազդեցութիւն կունենան նոյն
իսկ կառավարութեան վրա:

Ուրեմն յոյս ունենանք որ հա-
յերը, կաթողիկէ ազատամիտ հա-
յերը, բողոքական հայերը, յոյները
և թիւրքիստանի քրիստոնեայ այլ
ազգութիւնները կրկին իրաւունք
կը ստանան յոյսերով ապրել, իրա-
ւունք կը ստանան նայել Ֆրան-
սիայի վրա ինչպէս իրանց ազգա-
յին իրաւունքների պաշտպանի
վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲՈՍՏՈՆԻՑ (Գծնի վրա)

5 ապրիլ, 1879

Չափի երկրորդ օրը բոստօնցիքս ականատես
եղանք մի այնպիսի ապստամբութեան, որ ոչ ոք
կարող չէր գուշակել, մանաւանդ այս տարի,
երբ պօլիցիականների թիւը հարիւրով աւել-
ցրած էր ու անգործ մշակները կամ դատարկա-
շօքի անձինք հեռացրած էին քողաքից:

Կէսօրից յետոյ ժամը 5-ին Եւր խաղարում
մի անձնութիւն և պօլիցիականներից մինի մէջ
կռիւ է ծագում: Հայտնվում են ուրիշ անձինք,
որոնք սկսում են պաշտպանել անձնութիւն, գա-
լիս են և այլ պօլիցիականներ: Բայց ապստամբ-
ների թիւը յանկարծ այնպէս բազմանում է, որ
նոյն միջոցին վրա հասնող պօլիցիականները բոլոր
իր օգնականներով ստիպվում են փախչել: Եւ-
րոպական ամբիւր յարձակվում է մօտակայ պօ-
լիցիական երկրորդ մասի (2-я полицейская
часть) վրա և զարմանալի համարձակութեամբ
սկսում է ջանքերով պատահականների ապակիքը
և փեղկերը, ասն բոլոր կահաւորանքը, դռները
և շուրջ թղթերը պատռելով փողոցն է նե-
տում: Մի և նոյն պատահեցաւ նաև պօլիցիա-
կան կառավարութեան գլխաւոր շէնքի հետ,
որը գտնվում է քաղաքի ամենախիտ մաս-
ներում: Մի և նոյն վիճակին ենթարկվեցան
նաև պօլիցիականների և սրա օգնական Պուլի-
կովսկո տները: Բոլոր այս անկարգութիւնները
վերջացնելուց յետոյ ապստամբները գնում են
հրէայ Կոհանի ապրիտի պահեստը և օղի են
պահանջում: Կոհանը կատարում է նրանց պա-
հանջը: Գիշերվայ ժամի տասն էր, երբ ամ-
բիւր վազում է քաղաքի դէպի հիւսիսային
մասը, ուր գտնվում են հասարակաց տները և
սկսում են խորտակել նրանց պատահանները և
կահաւորանք, պատռում են բոլոր բարձրը
և անկողնները ու փետուրն ու բմբուլը քամու
են տալիս: Մօտ 17 տուն զոհ են գնում ամ-
բիւրի կատաղութեանը:

Ինչ անձնից էր բաղկացած այդ ապստամբ
խումբը—դժուար է ասել: Մենք այսչափ միայն
կարողացանք նկատել, որ ամենամեծ մասը կազ-
մում էին երեսայր և պատանիք, թէև, սկիզբ-
ները մանաւանդ, կային և չափահաս անձնութիւն
անձինք, ըստ երեւոյթի մշակ դասին պատկա-
նողներ:

Խռովութիւնը սկսած ժամին հեռագրեցին
Եւրօ շերտակ, որ կազմակերպ ուղարկվին, բայց
սրանք հասան միայն կէս գիշերին: Քաղաքում
գտնված զինուորական բազմ պահպանում էր
բանտը, այնպէս որ ապստամբները բոլոր իրանց
գործողութեան միջոցին ոչ մի ընդդիմութեան
չը պատահեցին: Գուցէ այս պատճառաւ էր,
որ ոչ մի ապստամբիւն տեղի չունեցաւ: Եթէ
ամենայն ինչ հաշտւալ է:

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆԱԿՈՎԻՍԻՑ

22 մարտի

Բոստօնից դէպի արեւմուտը 15—20 վերստ
հեռաւորութեամբ գտնվում է Եւր գիւղը: Եւր
գիւղը բաղկացած է երեք վերին և ներքին—
Եւր և Կեր վերքի միմեանցից շատ մօտ գիւ-
ղերից, որ բոլորը միասին կրում են ընդհանուր
Եւր անունը:

Ինտիկները պատկանում են երկու ազգու-
թեան—հայեր և թուրքեր, առաջինները թուր-
աւելի են երկրորդներից: Նրանք պարագում
են հողագործութեամբ: Եւրտեղ կինը գաղտա-
յին գործերում իւր ամուսնուհ հետ հաւասար
ընկեր է, նա ևս, եթէ ոչ աւելի, գոնեւս օգ-
նում է ամուսնի իր կարողութեան չափ: Եւր
ունի բաւական լայն և տափարակ հող, որ սե-
փականութիւն է աղաների: Եւր կարելի ասել
որ նա պողաբեր և մշակված հող է, որովհետեւ
որքան ինձ յայտնի է, 1—5 պուդ հազիւ է
բերում:

Օղը բաւականին մաքուր և առողջարար է,
տարուայ չորս եղանակներում այստեղի քամին

պակաս է լինում: Եւր չունի աղբիւրներ,
այլ մի ահագին գետ, որ կրում է Կիւն ա-
նունը:

Փողոցները կեղտոտ և ծածկված են անանց-
նելի աղբով: Գուր մանկով այդտեղ, ամեն մի
տանիքի վրա կը գտնէք չորացրած և միմեանց
վրա դարած ահագին կոյտեր, որ հետեւից
սարի գազաթիւն են նմանում: Ինչո՞ւ համար է
այդ:—Փայտի սակաւութեան և ի հարկէ մա-
սամբ էլ տնտեսութեան, կամ եթէ ճիշդն ա-
նենք, աղքատութեան պատճառաւ, աղբը ծա-
ռայում է դրանց վառելիքի փոխարէն: Տների
մասին խօսելը աւելորդ է, նրանք հին նահա-
պետական ձևի շինութիւններ են, բացի քահա-
նայի տունը, որ փոքր ի շատե ճաշակով է շի-
նված:

Դողովուրդը ծոյլ, դանդաղ և շատ անընդու-
նակ է աշխատելու, նա սաստիկ բթամիտ, կոպիտ
և անհասկացող է, այնպէս որ մի և նոյն խօսքը
20—30 անգամ կրկնելուց յետոյ, հազիւ կարող
ես նրան մի բան հասկացնել: Եւրուն որով նա
խօսում է, անձնութիւն մարդը ոչինչ չէ կարող
հասկանալ, որովհետեւ նա հայերէնը և պարս-
կերէնը խառնելով միասին աղաւաղում է ամ-
բող նախադասութիւններով...

Խմբագրի կողմից ազգային սաստիկ շուշլ և
պահանջող է, նա զրկում է իւրեան, ընտանիքը
և որդիներն ամեն տեսակ բանից,—հագուստից
պողից և այլն, բայց զրկվել խմբագրի, այդ ան-
հար է, մեռնելը աւելի լաւ է նրա համար:
Խօսքերս հաստատելու համար, բերեմ այստեղ
մի օրինակ, որ նոյն իսկ ազգային բերանից
եմ լսել: Օրինակ մի մարդ, ինչ դասակարգի և
պատկանէր նա, թէ հարուստ և թէ աղքատ այդ
մի և նոյն է նրանց համար իր, կամ իր որդու
հարսանիքին 30—40 պուդ գինի և 5—6 պուդ
արաղ է գործածում... Պատկիւղը հարսանիքին
պարտաւոր է ամբողջ երեք օր գիւղացուց հրա-
ւիրել իր տունը և այդ հիւրերը ոչ թէ փոքրիկ
թատով (նրանք քաղաքավարութիւն չը գիտեն),
այլ ահագին գաւերով սկսում են կոնծաբանու-
թիւնը, մինչև այն ժամանակ, երբ յայտնում են
թէ այլ ևս գինի կամ օղի չը կայ: Եւ այսպէս
քառասուն պուդ գինի և հինգ պուդ արաղը
մի քանի ժամվայ ընթացքում քամում, վերջաց-
նում են մեր արդէն թմրած հերոսները, բաքո-
սին երկրպագողները... Ի հարկէ խմբագրի պա-
տահած անկարգութիւնները,—տուր ու դմիոցը,
միմեանց գլուխ ջարդելը սովորական երեւոյթ-
ներ են, աւելորդ է այս մասին մի խօսք ան-
գամ:

Ունեն երկու եկեղեցի, մէկը վերին, միւսը
ներքին Եւրայում: Գուր առաջին անգամ դը-
րանց տեսնելով կամ հասարակ տուն կը կար-
ծէք, կամ թէ չէ թէ չէ շատ-շատ մտածէք,—
ուսումնարան, ըստ որում երկու ահագին գան-
գաններ մի փայտի վրա, առանց գմբէթի, կա-
խված են տանիքի գլխից: Թէև ևս երեք
չեմ ներս մտել այդ եկեղեցիներից և ոչ մէկը,
բայց ինչպէս այցելողները ասում են, այդտեղ
ևս նոյնպիսի բառեր են գործածում, ինչպէս
հասարակ խօսակցութեան մէջ: Օրինակ, քա-
հանան գործ է անում եկեղեցում այսպիսի բա-
ռեր, շուրջափ գմբէթը (բեր), աւետարանի գո-
թը (վեր առ), և այլն...

Ուսումնարան չը կայ: Մի քանի տարի ա-
ռաջ հենց անցեալ տարի էլ գիւղի քահանան
էր սովորեցնում աշակերտներին, ի հարկէ
միայն «խոնարհեցո» և «այրեցո»: Բայց այժմ
մեծ ուրախութեամբ լսեցի, որ չեմ յիշում թէ
ինչ տեղից երկտասարկ են բերել և աշակերտ-
ներին յանձնել նորան, որ սովորեցնում է ուս-
սերէն և հայերէն կարգալ ու գրելը: Միջանից
երկուսն է որ գիւղացիք ձգտում ունեն դէպի

Թագրէն եւ կենսութիւն հայկական թիւն ձեր բնիկ հայրենեաց մէջ առաւարտներով կրթէք ձեր արագաց սերունդն պարտաւորապէս դաստիարակութեամբ որպէս զի ՚ի ծագելէ այն երջանիկ աւուր ի վերայ հայաստանի նա թափուր չը գտնուի իւր հարստ գաւառներէն... մնալ գտնուի անոր մէջ այս սկզբամբ եւ տեսութեամբ որպէս է գործեն շայն շայն տանելով ամենայն ամենայն հաստատութեամբ եւ այլն: Բուժանոյ կառավարութիւնն ի նշան այն համակրանաց զորն որ տաճէ յինքն շայն ազգի նկատմամբ շատ մը շայն պաշտօնեայն որն իւր մէջ Պապա-Տաղի կուսակցին շայն մ'է որ Բուժութիւն կը կոչուի, նայալէս ուրիշ պաշտօնեայն եւ այլն: Եւ եւ շատ մը շայն բարեկամներ ունիմ զորս ոգւով չափ կը սիրեն եւ այլն:

Առ այս պատասխանեց մեծ, ձապուրդն: «Պորին շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն ունիմք այն համակրանաց առթիւ: Գորն որ Ձեր ազատաւոր կառավարութիւնն եւ Ձեր վսեմութիւնն ցոյց կուտայ մեր ազգի նկատմամբ: Երանի պիտի լինի այն աւուր՝ յորում Ձեր վսեմութեան մեր հայրենեաց նկատմամբ արտասանած այն յուսանք խօսքերը պիտի արդիւնաւորին շնորհիւ Ներսիսի ազատաւոր կառավարութեանց: Բայց ցաւով է ըսել որ մեր վիճակն որ ըստ օրէ վաղեմարտն վրա է, մեր բնիկ հայրենի երկրին մէջ գրաւուած ժողովրդեան վիճակն անտանելի եղած է ի ձեռս խուժարութեւն զրապիսի՝ յորս տաւ կաւին մեր ազգի գոյութիւնն արգարե զարմանալի է խորհող մտաց առջեւ եւ այլն: Եւ այլն: «Ու յայդմ իսկ են սրանցիւքն, յաւրեց ՚ն: Վսեմութիւնն, որ ծայրայեղ վիճակի մէջ տակաւին գոյ է շայն ազգն եւ պիտի մնայ անուշառ ապագայ երջանկութիւն մը ձեռք ձգելու համար՝ որպէս իրաւամբ ժառանգուոր է: միայն թէ դուք ձեզ միշտ գործելու էք ներքին բարեկարգութեանց մասին: յուսահատութիւն, յուսովիւն եւ անտարբերութիւն խաբար ՚ի բաց բարձուելու են ՚ի ձեռք եւ երբեք մեռ գտնուի չեն ձեր խորհրդոց բանից եւ գործոց մէջ եւ այլն եւ այլն:

Աւաւիկ, բարձր: Պաշտօնէի մը յայտնած ազատ գաղափարներն որք որչափ ճշմարիտ են՝ այնքան բաղդաւոր են հանձնարել մարի մը արդիւնքն ըլլալուն:

(Փոփոխ)

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդօնից հեռագրում են, որ մարտի 27-ին կայացաւ միջազգայն խորհրդի նիստը, Նիդերլանտում պատահած ճգնաժամը քննելու համար: Աւիստն եւ Բելիէր չեն կամենում հրաժարական տալ առանց անդլական եւ Ֆրանսիական տէրութիւնների թոյլտուութեան:

—Նորբերում գուլաները 4000 թւով յարձակվեցին անգլիացիների պաշարեղէն պահեալ վրա, սպանեցին 30 անգլիական հասարակ զինուորներին եւ մի օթիցներին: Բան մարդ անհետացան: Պաշարեղէնների 20 այլերը կորան:

—Ապրիլից հեռագրում են, որ Մահա-մեդ-Քէֆէրիկ հրաժարական տուեց: Խեղի-վը հրաժարացրեց Աւիստին եւ Բելիէրին: Ապրիլում է Նիդերլանտի նախագահութեամբ մի նոր միջազգայն ընկերակցութիւն:

—Բոլորական ազգային ժողովը, ինչպէս հեռագրում են Տիրնօթից, չունենաց պետական կանոնադրութեան այն յօդուածը, որով արգելվում է պրոպէլանդա: Ազգային եկեղեցու հիմնը մերժված է: Վճռված է պահպանել բոլորական եկեղեցին այն դրութեան մէջ, որի մէջ նա գտնվում էր թուրքաց տիրապետութեան ժամանակ:

—Բոլորական ազգային ժողովը յայտնեց էկզարխին անկախ Բ. Գրեյն:

—«Agence Russe» լրագրող հաղորդում է, որ Արեւելեան Բուժակցի վիճակի ապահովումը եւ բուժական պետութիւնների խառն գրաւման միջոցով անհնարին է դառնում, որովհետեւ Գերմանիան, Ֆրանսիան եւ Իտալիան հրաժարվում են գրաւման մէջ մասնակցելուց: Բ. Գուռը իր կողմից աշխատում է արգելք դնել խառն գրաւման, սինդրոլ իր իրաւունքներին վրա գրաւել իր գործերով Արեւելեան Բուժակցի մի քանի քաղաքներ:

—Բոլորական ազգային ժողովը եկեղեցու վերաբերութեամբ կայացած փնտի պատճառով բոլոր եպիսկոպոսները, չափաւոր կուսակցութեան առաջնորդները եւ Եկզարխ բողոք ներկայացրին եւ հեռացան ժողովից:

—«Голосъ» լրագրող ըսել է որ կոնս Շու-վարով Լօնդօն վերադառնալու կապ ունի եւ բուժական պետութիւններին կօնթրէնցիայի պրոէկտի հետ: Ասում են կօնթրէնցիայի կայանաւոր մասին այժմ եռանդուն բանակցութիւններ շարունակվում են:

—Լօնդօնից հեռագրում են, որ Անգլիա եւ Ֆրանսիա բարեկամաբար դիմել են Նիդերլանտի խեղճիկն զրուցանելով նրան իր արած օրը խալի մասին, միջադարձերի հրաժարանները վերաբերութեամբ: Նիդը պետութիւնները սպառնում են դիմել Թուրքաց կառավարութեանը պահանջելով որ հեռացնի իրան խեղճիկն:

—Հռօմից հաղորդում են լրագրիներին, որ մարտի 29-ին Իտալիայի արապին գործերի Տօրնիէլի միջնադարին ներկայացան Ալեանիայի պատգամաւորները: Նրանք առաջարկում են պետութիւններին պահպանել Ալեանիայի առ բողջութիւնը, աչքի առջեւ ունենալ թիւրք-յունաց խեղճիկը:

—«Մասիս» հաղորդում է հետեւեալը: «Գու-հուժեմը կը լսեմք թէ Մերովել եւ Սարգիս Կիւլպէնկեան էջեմիլը, որք Պօլսոյ առեւտրական մեծ առեւտրէն միջին գուլար կը գտնուին: «Արարատեան» ընկերութեան գրամոց աւանդաւորութեան պաշտօնն ընդունել են: Յիշեալ Մեծ. էջեմիլներուն այս ազգափրկական գործը շնորհակալութեան արժանի է: Գար-ձեալ կը լսեմք թէ «Արարատեան» ընկերութեան գործադիր ժողովը նոր պիտածէ մը կը պարտաւորէ 1879—80 տարւոյն համար, յորում աւելի ընդարձակ սահման մը պիտի գծէ ընկերութեան ազգօգուտ ձեռնարկներուն, այսինքն ուրիշ գործոցն ալ պիտի բանաց շայտատանի մէջ: Կը յուսամք որ «Արարատեան» ընկերութեան գործադիր ժողովն իւր ուշադրութեան չը լքուի ծէրախի բազմաթիւ շայ բնակիչներն ալ, որոց մասնաւորապէս յետնալ եւ հետեւաբար ձեռնառութեան կարօտ վիճակը բացատրութեան կարօտ է:»

—Մարաշից «Մասիս» լրագրին գրում են հետեւեալը: Տեղւոյս միւլթէսարը Վէյսի փաշան ամիսէ մ'ի վեր շաղկապ կը գտնուի ուր կըսուի թէ կուսակցին եւ նորա մէջ անհամաձայնութիւն ծագած է: Վերջին օրերն շաղկապն եկած գաղանի հրահանգի մը վրայ տեղւոյ Քէմէիլի հուգուրը Ֆրանսիկ Գեր. Նիդրլանտ եպիսկոպոսին համար մահապարտութեան վճռագիր կըսեց: Մարաշում մէջ այժմ 139 Աւիսցի, Ֆրանսիկ եւ Միսլացի բանտարկեալ ազգայինը կը գտնուին: 40 հիւանդ կայ եւ մեռելոց թիւը 13-ի հասած է: Կուսակցին այս շարժումը հեռագրով հրաման եկաւ որ բանակ կոխելու ամբաստանութեամբ 28 Միսլացի բանտարկեալ մէջ էթէ գործութիւն ընդունի կան, բանտը պահելով, միացեալներն արձակուին: Առանցք քանի արդէն շաղկապ զրուած են, մէկ քանին մեռած, վնաս համար գործութեան ամբաստանութիւն եղած է, եւ միացեալ տասն անձնաց ալ այսօր կամ վաղն ապաստութեան խօսք կայ, բայց կառավարութիւնն որ օրի կը յաւանդէ: Բանտարկեալ մէջ հիւանդներուն

թիւը երթալով շատնալու վրայ է: Թաթար եւ Չէքքէզ զաղթականաց թիւն օր ըստ օրէ բազմանալու վրայ է հաս: Գործութեան յանձնարք բանտարկեալ Չէքքէզի մը ազգակիցն է թիւ 100-ի չափ գինեալ անձինք 15 օր առաջ հաղարարեալն վրայ յարձակելով պիտի սպանէին: Եթէ տէրութեան զինուորները վրայ չը հասնէին: Բանտարկեալ Չէքքէզն իսկոյն ազատեցաւ: Ահա այս վիճակն մէջ է տեղւոյս կառավարութիւնը: Գրեալներէն միշտ ահա ու գողի մէջ են:

—«Մասիս» մէջ կարդում ենք. «Վասպու-րականի Բիւրոնեաց գաւառին մէջ Հիւսէին օղլու Միլլա անուն մէկը զանազան տեսակ չարիք գործելէ զատ խեղճ գիւղացուց ձեռքէն բռնի գրամ եւ երկվար յախշտակելուն համար բողջոյ գիր մ'է կեամք է Պարսկաբա-րան:

—«Մասիս» հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնները: «Մարաշից Աղեանը անուն շայն գիւղին բնակիչներէն մայրաքաղաքը գրաւուող 150 պանդուխտ ազգայինք ներկայ մարտ ամսոյս սկիզբէն ընկերութիւն մը կազմած են, զոր Վալիսպախի Ներսէս Սրբաւանին վրայ իրենց ունեցած խորին համակրութեան իր նշան ներսէսան անուանած են: Սոյն ընկերութեան նպատակն է յիշեալ Աղեանի գիւղին եկեղեցին պաշտաւ պահել եւ զարդոյն յառաջդիմական վիճակի մը մէջ դնել: Այս կրկին նպատակին յաւակցեցած են 400 ոսկու չափ գումար մը, զոր արդէն հաւաքած էին գիւղին եկեղեցւոյն համար միայն, եւ այդ գումարն իրենց մէջ տակաւ զարձանելով միշտ աւելցնելու վրայ են: Կը լսեմք թէ ընկերութեան գործադիր ժողովն արդէն գործել սկսելով որոշել է քանի մ' օրէն գաւառում մ'է պէտք եղածին չափ դասադրեր զգլխի Աղեանի գիւղը: Վերջապէս, յայտնի կըսուի որ այս նորա հաստատ ընկերութիւնն յիշեալ գիւղին բաւոյական եւ մասնաւորապէս զարգացման հզօր պատճառ մը պիտի լինի: Այսպիսի ազգա-սիրական ձեռնարկներ պէտք չունին գովասանից, որովհետեւ իրենց գովասան իրենց մէջ է բայց չեն կրնար առանց ցաւելու յիշել թէ շայտատանի մէջ բազմաթիւ գիւղեր կան, որք թե-րեւ Աղեանի գիւղէն աւելի ձեռնառութեան կարօտ են, եւ որոց համար սակայն բնաւ խորհող չը կայ: Կը յուսամք որ Ներսիսեան ընկերութիւնն օրինակ մը պիտի լինի մեր այն պանդուխտ ազգայնոց, որք Կ. Պօլսոյ մէջ առ թիւ եւ գիւրութիւն քանակալով անփոյթ կը կենան իրենց հայրենի երկրին յառաջադիմութեան:

—Երբեք միջ գրում են թէ այնտեղի հա-յերի գրութիւնը նոյն է ինչ առաջ, որ հա-մանաւորով շայտատանի միւս տեղերի հայերի գրութեան հետ, բաւական գոհացուցիչ է եւ հանգիստ, փան որպէս երբեք միջ հայերը ամե-նակն չեն մտածում զաղթելու վրա, թէպէտ եւ ուրիշներին պէս մեծ անհամբերութեամբ են սպասում շայտատանին խոստացած թե-ֆօրմներին: Մի մեծ չարիք, որ հաստատա-պէս ճշմարիտ է մուսուլման եւ հայ բնակու-թեանը՝ այդ կայմն է, որի արժէքը այնչափ ընկած է, որ թուրք եւ հայ բնակիչները դա-զարացրել են իրանց առեւտուրը եւ խանութ-ները կապած սպասում են թղթադրամի ջնջ-վելուն: Այս ծանր հանգամանքը այնչափ յայ-արնվում է բարդապէս եւս, որ թուրքերը բա-ցարձակ ծաղուում են եւ պարտաւոր իրանց տէրութիւնը եւ հայերի հետ մտնում են եւ մտնում, ասելով թէ երկրը յիւսել կարօտ է մեծ թեֆօրմներին եւ հայերը իրա-ւացի են պահանջում վարչական վերանորոգու-թիւն, որով դուրս գլխիկն եւս իրանք վատա-գոյն չարիքներին:—

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՑ

Ա. ՊԵՏԵՐՈՎԻՉ, 9 ապրիլի: Նէվա գետի սա-ռուցը բացվեցաւ: Կամեղանտը երէկ անցաւ գետը:

Ա. ՊԵՏԵՐՈՎԻՉ, 9 ապրիլի: Պետական բան-կի 50% տոմսով առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 95 ռ. 58 կ., երրորդ 95 ռ. 50 կ., չորրորդ 95 ռ. 75 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսով 237 ռ., երկրորդ 232 ռ. 50 կ., արեւելեան առաջին 93 ռ., 25 կ., ոսկի 8 ռ. 50 կ.: Լօնդօնի վրա սուտայ 1 ռուբլ արժէ 23 պէնս: Տրամադրու-թիւնը ամուր է: Բօրսայի դիմում 31/3:

ՄԻՋԱԳԱՅԻՆ, 9 ապրիլի: Մօսկվա գետը վա-րարելով դուրս եկաւ եկեղեցի եւ հեղեղեց ափերը, Կրեմլն այգիի մի մաս, Զարիպիայի մեծ մասը, բայց մանաւանդ Զամօսկարէչիկ անուանված թաղը: Այ թէ միայն սարգափ-ները, բայց եւ աների սարդին յարկերը լցված են ջրով: Մի քանի ընտանիքներ հաղիւ ա-պառազեցան փախչել:

ԲԵՆԴԱՅԻՆ, 9/21 ապրիլի: Ուրբաթ օրը հա-զար արեւմտեաներ մասն Օպիկարեան վիճակը եւ դրանցին Կուրչումէ: Սերբական զօրքը 200 թւով յետ քաշվեց: Ազգայինցան վից բառարկօններ եւ երկու բառարկաններ: Արեւա-ուսները յետ մղվեցան եւ ամբացան Սամակօ-վան բարձրութիւնների վրա: Այնտեղից նը-րանք կրկին յարձակուներ են անում: Սեր-բական կառավարութիւնը պահանջում է թիւրքաց կառավարութեանց ուղարկել կանո-նաւոր զօրքեր իր սահմանների վրա, եթէ ոչ Սերբիացիները կը ստիպվեն յարձակվել արեւա-ուսների վրա:

Ա. ՊԵՏԵՐՈՎԻՉ, 10 ապրիլի: Մեծ Իշխան Նիկօլայ Միկայովիչ Փիլիք-Աղիւստան է նշանակված: Մօսկվայում, Պէտրով, Տիւրու-մ եւ Բեմսկում գետերի յորգութիւնը աստիկ հեղեղներ պատճառեց: Ա. Պետերբուրգում ժամանակաւոր գնեւալ գուբերնատօր Գուր-կօն գրեալահներին մէջ իւրաքանչիւր գրան առաջ գիշերակց եւ ցիւրկիկ օրապահութիւն նշանակեց: Այդ գրեալահները պարտական են օգնել ոստիկանութեան նրա գործունէու-թեան մէջ: Հրային կամ հասարակ երկաթէ գէնքերի մագաղանների կամ խանութների տէ-րերը պարտական են տեղեկութիւն եւ ցուցակ ներկայացնել բոլոր գէնքերի մասին: Նրանք ի-րաւունք չունեն ծախել այդ գէնքերը առանց քաղաքապետի թոյլտուութեան: Ձէնք ունե-ցող մասնաւոր անձինք պարտական են իսկոյն յայտնել եւ ներկայացնել իրանց գէնքերը տե-ղւոյն պոլիցային: Ձէնք կրկին կամ պահե-լու իրաւունքը միայն քաղաքապետը կարող է տալ:

Կ. ՊԵՏԵՐՈՎԻՉ, 10/22 ապրիլի: Այսօր Թիւր-քիւն եւ Աւստրիան ստորագրեցին Սերբիայի եւ Հերցեգովինայի գրաւման վերաբերեալ այն դաշնագիրը, որով նրանք իրաւունք են ստա-նում Նօվի-Բազարի անձալում պահպան գործերը պահել:

Ա. ՊԵՏԵՐՈՎԻՉ, 10 ապրիլի: Պետական բան-կի 50% տոմսով առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 95 ռ. 58 կ., երրորդ 95 ռ. 75 կ., չորրորդ 95 ռ. 50 կ., ներքին 50% առաջին փո-խառութեան տոմսով արժէ 237 ռ., երկ-րորդ 232 ռ., արեւելեան առաջին փոխառու-թեան տոմսով արժէ 93 ռ. 25 կ., երկրորդ 93 ռ. 50 կ., ոսկի 8 ռ. 51 կ.: Ռուսաց 100 ռուբլ Փարիզի վրա արժէ 241 Ֆր. 25 ան-տիւմ: Տրամադրութիւնը հանգիստ է:

ԼՕՆԴՈՆ, 10/22 ապրիլի: Կանտոնից հեռագրում են, որ ապրիլի 4-ին 11,000 զուլաներ յարձակվեցին Չէլմի-Ջօրի բանա-կի վրա, բայց մեծամեծ կորուստներով յետ մղվեցին: Ապրիլի 4-ին գիշերը Չէլմի-Ջօրը ազատեց Եփօն քաղաքը պաշարումից: Անդ-լիացիները թէ վերաւորվածներով եւ թէ սպանվածներով 120 մարդ կորցրին: Զուլա-ները 2,500 մարդ կորցրին: Եփօն մաքրված է, պահպան գորքը վերադառնում է գէպի Տուքէս գետը: Տրամադրել բնակիչները պաշ-տում են պաշարել Պրէտօրիա եւ բանտարկել Բարոն-Պրէրին, եթէ չը յարգեն նրանց պա-հանջները:

Նմբագիր—Հրատար. ԳԻՊՈՐ ԱՐՄԻՆԻՆԻ

